

Ապաշխարություն, որը դարձի է բերում

Իմ ամենից շատ սիրած պատմություններից մեկը Մորմոնի Գրքում առնչվում է Մոսիայի որդիների միախոնեական ջանքերի հետ, երբ նրանք գնացին Լամանացիների մեջ: Ուսուցանելով այնպիսի մարդկանց, ում ավանդություններն, ըստ երևույթին, չէին նպաստում հոգևոր աճին, այս հավատարիմ միախոնեակներն, այնուամենայնիվ, օգնեցին, որպեսզի Լամանացիների մեջ տեղի ունենար հզոր փոփոխություն: Մենք գիտենք, որ Մոսիայի որդիներն «ուսուցանում էին Աստծո զորությամբ ու իշխանությամբ» (Ալմա 17.3), սակայն այս պատմության ամենաուշագրավ իրադարձությունն այն է, որ «բոլոր նրանք, որ հավատացին նրանց քարոզչության և դարձի եկան առ Տերը, երբեք չհեռացան» (Ալմա 23.6):

Ես տեսել եմ, թե ինչպես են մարդիկ եկել Եկեղեցի միախոնեական աշխատանքի շնորհիվ կամ մեծացել են Եկեղեցում, և տեսել եմ, թե ինչպես են նրանցից ոմանք հեռացել: Այս երևույթն ինձ ստիպել է խորհել, թե ինչ տեղի ունեցավ Լամանացիների դարձի գալու հետ, որ նրանք «երբեք չհեռացան»:

Արդար ավանդություններ

Այս նորադարձներն ինչպե՞ս դարձան խաղաղ ժողովուրդ և բուրբի համար օրինակ: Ալմայի գրքում մեզ ասվում է, որ այս Լամանացիները «բերվեցին՝ հավատալու Նեփիացիների ավանդություններին» (Ալմա 23.5): (Մեր ձևով կարող ենք ասել, որ նրանք բերվեցին հավատալու Վերջին Օրերի Սրբերի ավանդություններին): Հաճախ մենք մտածում ենք, որ ապաշխարությունը միայն

մեր կատարած սխալներն այն կողմ դնելու գործընթացն է, այնուամենայնիվ, հավասարապես կարևոր է, թե ինչ ենք անում վատ սովորություններն ու ավանդությունները նորով ու լավով փոխարինելու համար:

Ապաշխարության գործընթացն ավելին է, քան մեր կատարած սխալի համար պարզապես ներողություն խնդրելը: Ապաշխարությունը մեզանից պահանջում է հետագա քայլեր: Երբ լսողները համաձայնվում են մկրտվել, նրանք զգում են Սուրբ Հոգին և ուզում են ապաշխարել: Այնուամենայնիվ, երբեմն նրանք չեն կարողանում պահպանել իրենց արդարակեցությունը, քանի որ «վայր չէն դնում» իրենց ապստամբության զենքերը» (Ալմա 23.7), ինչ էլ որ այն լինի:

Երբ Լամանացի նորադարձներն ընդունեցին, որ իրենց ավանդությունները սխալ են, նրանք հասկացան, որ պետք է փոխվեն: Նրանք որոշեցին վերցնել իրենց ապստամբության զենքերն ու «թաղել» դրանք հողի խորքում» (Ալմա 24.17):

Այլ կերպ ասած, նրանք հեռացրեցին իրենց գայթակղությունն ու դրեցին մի այնպիսի տեղ, որ այն չկարողանա հետ գալ նրանց մոտ: Ի՞նչ կասեք մեր մասին: Պե՞տք է, որ մենք նույնպես հեռացնենք «գայթակղություններն ու մեղքերը» . . . , որոնք, իրավ, այնքան հեշտությամբ նեղում են [մեզ]» (Չեփի 4.18): Արդյոք հեռու մնո՞ւմ ենք այն մարդկանցից ու վայրերից, որոնք կարող են գայթակղել մեզ խախտել Իմաստության խոսքը: Մեր համակարգչում տեղադրե՞լ ենք արդյոք համացանցային զտիչ: Փոխաբերական իմաստով ասած՝ թաղե՞լ

ենք արդյոք այն սովորությունները, որոնք մեզ հետ են պահում Սուրբ Հոգու ընկերակցությունն ունենալուց:

Լամանացիները նույնպես սկսեցին իրենց կյանքում արդար օրինակներ սահմանել: Դա նրանց հաջողության բանալին էր. նրանք իրենց կյանքի դատարկությունը լրացրին՝ սահմանելով նոր ավանդություններ, որոնք մոտեցրին նրանց Աստծուն:

Փոխենք մեր կյանքը

Մեր նպատակն է նմանվել դարձի եկած Լամանացիներին, որպեսզի մենք նույնպես ներում ստանալու մեծ ցանկություն ունենանք ու, հետևաբար, «այլևս չկրկնեք» Աստծո դեմ» (Ալմա 23.7):

«Այն ամենը, ինչ մենք կարող էինք անել . . .՝ ապաշխարել բոլոր մեր մեղքերից . . . և համոզել Աստծուն վերցնել դրանք մեր սրտերից», - ասացին նրանք, «քանզի այն ամենը, ինչ մենք կարող էինք անել՝ բավականաչափ ապաշխարել Աստծո առաջ, որպեսզի նա վերացնի մեր արատը» (Ալմա 24.11):

Նրանց սրտերը փոխվեցին, որը և գործողության մղեց նրանց: Նրանց ապաշխարությունը հանգեցրեց նոր ավանդությունների կիրառմանը, որն ամրացնելու էր իրենց, երբ հանդիպեին գայթակղությունների: Այս ավանդությունները փոխարինեցին հներին և օգնեցին նրանց ամուր մնալ՝ չնայած շարունակական փորձություններին:

Եկեղեցու և՛ նոր, և՛ հին անդամների համար ահա հինգ անելիքներ, որոնք կարող են փոխել մեր կյանքը: Մրանք Աստծո պատվիրաններ են և մեզ կօգնեն հավատարիմ



*Նախագահ Մարտին,
Արևելյան Եվրոպայի
տարածաշրջանի նախագահի
առաջին խորհրդական*

մնալ՝ նույնիսկ փորձությունների ու գայթակհությունների հանդիպելիս: Եթե մենք հետևենք դրանց, այդ գոծողությունները կնպաստեն, որպեսզի Սուրբ Հոգին շարունակի աշխատել մեզ հետ ու ամրացնի մեզ՝ մինչդեռ մեր վկայությունը կմեծանա:

1. Անցկացրեք անձնական ու ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրություն:
2. Աղոթեք անհատապես և ընտանիքով:

3. Անցկացրեք ընտանեկան երեկո:
4. Վճարեք ազնիվ տասանորդ:
5. Ծառայեք ուրիշներին՝ իրականացնելով Եկեղեցու կոչումները:

Եթե մենք հաստատենք արդարակյաց մարդկանց ավանդությունները, ապա մենք կհաղթահարենք մեր թույությունները, կաճենք հավատքով ու չենք հեռանա:

Երկաթե ձողից բռնվելն ու ամեն ինչում, որ անում ենք, առ Աստված կանչելն ապաշխարության ամենամեծ մասն են կազմում: Այդպիսին է

նաև վատ սովորությունները հեռացնելն ու դրանք արդար ավանդություններով փոխարինելը:

Նորադարձ լինենք, թե Եկեղեցում ծնված՝ մեր հոգևոր ամրությունը գալիս է պարբերաբար արդար գործողություններում ներգրավվելուց, որը մեզ մոտեցնում է Աստծուն: Վերջին հաշվով, ապաշխարությունը փոխվելու, գործելու և այնպիսին դառնալու գործընթաց է, ինչպիսին Երկնային Հայրն ուզում է, որ լինենք, որպեսզի կարողանանք վերադառնալ Նրա ներկայություն: ■

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾՍԵՐՋԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղղված է Եկեղեցու բոլոր տեղական անդամներին

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Մենք մեր ջերմ ողջույններն ենք հղում ձեզանից յուրաքանչյուրին: Մենք սիրում ենք ձեզ և երախտապարտ ենք Աստծուն և Քրիստոսին ձեր հավատարմության համար:

Դուք, հավանաբար, ծանոթ եք ստորև տրված «Ինձ հետևիր» ծրագրի նպատակներին: Որպես Ավետարանում ձեր եղբայրներ, մենք կցանկանայինք շեշտել, որ այդ նպատակները ամբողջովին հոգևոր են և անձնական իրենց էությունը: Մենք հրավիրում ենք խորհել դրանց շուրջ և ընդունել դրանք, երբ կզգաք, որ պատրաստ եք: Եթե զգում եք, որ չեք կարող ապրել համաձայն բոլոր նպատակների, ընտրեք մի քանիսը, որոնք առավելագույն կօգնեն ձեզ և ձեր ընտանիքին: Դուք հաշվետու եք միայն Աստծո առաջ: Այդ նպատակների իրականացման առաջընթացը չի զեկույցվում, և ղեկավարները չպետք է հարցնեն անդամներին այդ մասին: Դրանց միակ նպատակը օգնելն է ավելի մոտենալ Աստծուն և Քրիստոսին:

Անցյալ տարի հոկտեմբերին մենք խորհրդի ժողով ունեցանք Ռուսաստանի, Ուկրաինայի և Հայաստանի Եկեղեցու ղեկավարների հետ՝ և եղբայրների, և քույրերի: Չորս ժամ տևողությամբ ժողովի ընթացքում մենք քննարկեցինք, թե ինչպես կարելի է բարձրացնել Սրբերին տարածաշրջանի այս և այլ երկրներում: Դա պատմական ժողով էր. մենք մեծ առատությամբ զգացինք Սուրբ Հոգու ներկայությունը: Հոգու ազդեցության ներքո մենք սկսեցինք հասկանալ, թե ինչպես Տերը կցանկանար մեր միջոցով օրհնել Եկեղեցու անդամներին: Արդյունքում մենք ունեցանք «Ինձ հետևիր» ծրագիրը:

Թող Աստված լինի ձեզ հետ միշտ և հավերժ:

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի նախագահություն ■

Հոգևոր նպատակները պարունակող ցուցանակ

«Ինձ հետևիր»

Մեր երկնային Հայրը մեզ մեծ օրհնություններ է խոստացել, եթե մենք գանջ հնախ Նրա Սրբին Հիսուս Քրիստոսը, և հետևենք մարգարեների և առաքյալների խորհուրդներին: Մենք հրավիրում ենք Եկեղեցու Արևելյան Եվրոպայի տարածքի անդամներին խորհել հետևյալ նպատակների շուրջ: Մենք հավատացած ենք, որ նրանք, ովքեր ազատորեն ընդունեն և բռնակառնեն այդ նպատակներին, կստանան ավելի մեծ խաղաղություն, լույս և ուրախություն իրենց կյանքում:



«ԵՎԵՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՈՏ և ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԵՔ ՆՐԱՆՈՒՄ»

ԱՄԵՆ ՕՐ ԵՍ.

- Կազմեմ իմ երկնային Հորը՝ երախտագիտություն հայտնելով և առաջնորդություն խնդրելով:
- Կվերտնեմ լույս և գիտելիք սուրբ գրություններն ուսումնասիրելու միջոցով:
- Կհիշեմ Փրկչի կյանքը և իմ կյանքն ու խաղաղը:
- Ժամանակ կհատկացնեմ ընտանեկան աղոթքին և սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրությանը:
- Կաշխատեմ ապրել արժանի Սուրբ Տառնի օրհնություններին:

ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ և ԵՍ.

- Կուճեմանք ընտանեկան տնային երեկո:
- Կպատրաստվեմք կիրակի օրվան և սուրբ կյանքն այդ օրը:

«ԳԻՏԵՔ ԳՄԱՌՆԵՐԻՆ, ԱՐԱՍԱՑՐԵՔ ՈՋԽԱՐՆԵՐԻՆ»

ԳՂԱԻՔ ՏԱՐԻ ԵՍ.

- Կերակրեմ ուրիշներին նեկեղեցու ժողովներին և միջոցառումներին:
- Կելիվեմ Մորոնի Գրքով իմ ընկերների և ծանոթների հետ:
- Միրով մեռք կմեկնեմ նրանց, ովքեր ակտիվ չեն նեկեղեցում:

«ՄԵՎ ՄՈՒՏ և ՄԵՎ ՄՏՔԻ»

ԱՆՉԱՄԲ ԵՍ.

- Մեր կցուցաբերեմ իմ ամուսնու կամ կնոջ հանդեպ և կաշխատեմ մեկ արտի լինել իմ ընտանիքի հետ:
- Ձերը կմեմք ընտանեկանությանը, վերաբարեկցելուց, բամբասանքից կամ ուրիշների մասին վատախոսելուց:
- Կօղենեմ բոլոր նրանց, ովքեր հանախում են նեկեղեցի, իրենց զգալ ընդունված, սիրված և ղեկավարված:

Հարցազրույց Հիսուս Քրիստոսի «Կրթիչ Սրբի» Ներքին Կրթական Կառույցի օրհնությամբ: © 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Նոր կոչումներ

Ալեն Բրայրն Բոսթրոմը, 61 տարեկան, և Շերի Լի Լյուիս Բոսթրոմը (չորս զավակ, Ռոուզ Քենյուն 7-րդ ծովս, Հերիման Յուտա Ռոուզ Քենյուն ցից) կղեկավարեն Հայաստան Երևան միսիան, հաջորդելով Նախագահ Ջ. Սթիվեն Քարլսոնին և Քույր Դայան Քարլսոնին:

Եղբայր Բոսթրոմը նախկինում ծառայել է որպես ցցի նախագահության խորհրդական, ցցի գործադիր քարտուղար, եպիսկոպոս, քահանայապետ, ցցի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ և միսիոներ Շվեդիայի Ստոկհոլմի միսիայում: Միջազգային հաշվապահական կենտրոնի նախագահ է: Ծնվել է Լոնդ Բիչում, Կալիֆորնիա, Ալֆ Վիկտոր Լաուրիտս Բոսթրոմի և Բեթի Ջին Բլոմքիստ Բոսթրոմի ընտանիքում:

Քույր Բոսթրոմը ծառայել է որպես ծխի Երեյանների խմբի քարտուղար, ցցի ու ծխի Սփոփող Միության նախագահ, ծխի Երիտասարդ Կանանց նախագահության խորհրդական և Երեյանների խմբի ուսուցիչ: Ծնվել է Բուուգենում, Մոնտանա, Քենդալ Գարի Լյուիսի և Ջորջիան Սվենսեն Լյուիսի ընտանիքում: ■



Ձախից աջ՝ քույր Պ. Բեչեր, քույր Ս. Փորթեր, քույր Յ. Զլեբինգաթ

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի Երեյանների Միության նախաձեռնություն

Քույր Սյուզան Փորթեր, քույր Յուլիա Զլեբինգաթ, քույր Պաուլին Բեչեր

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի նախագահության անդամները և նրանց կանաչ վերջերս հանդես եկան Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի Երեյանների Միությանը վերաբերող մի նախաձեռնությամբ, որը հետապնդում է հետևյալ համընդհանուր նպատակը.

Հասկանալով, որ մեր երեյանները Եկեղեցու ապագան են, Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի ղեկավարները կաջակցեն ծնողներին նրանց սուրբ պարտականության մեջ՝ ուսուցանել իրենց երեյաններին, և կօգնեն, որ Երեյանների Միությունը դառնա այնպիսի վայր, որտեղ երեյանները կուսուցանվեն «Տիրոջ կողմից»:

Երեյանների Միությանը վերաբերող նախաձեռնությունը կենտրոնանում է երեք հիմնական նպատակների վրա.

- Աջակցել Երեյանների Միությանը՝ ավետարանը երեյաններին սիրո և ուրախության մթնոլորտում ուսուցանելու հարցում:
- Աջակցել ծնողներին՝ ավետարանն իրենց երեյաններին տանը ուսուցանելու հարցում:
- Մեծացնել հաղորդության ժողովների երկրպագության ոգին, օգնելով երեյաններին՝ մեծանալ ակնածանքի մթնոլորտում:

1. Աջակցել Երեյանների Միությանը՝ ավետարանը երեյաններին սիրո և ուրախության մթնոլորտում ուսուցանելու հարցում

Պատկերացնենք մի դասարան՝ բազում երեյաններով ու


ղեկավարներով, ովքեր միասին վայելում են ավետարանի դասերը: Սա կարող է տեղի ունենալ ցանկացած Երեյանների Միությունում, անկախ նրանից, թե որքան մեծ կամ փոքր է այն:

Երեյանների Միության դասերը հաճելի կարող են լինել, եթե երեյանները մասնակցում են սովորելու գործընթացին, այլ ոչ թե միայն նստում ու լսում են: Տեսնելը, դիտելը, խոսելը, շարժվելը, լսելը և ինչ-որ բան անելը կօգնի երեյաններին ավելի լավ հասկանալ և հիշել երգերի ու դասերի ուղերձները:

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանը նոր կյուբեր է մշակել, որոնք կօգնեն Երեյանների Միությանը դառնալ սովորելու և ուրախության վայր:

«Բարի գալուստ Երեյանների Միություն» գիրք-ուղեցույցը մանրամասնում է Երեյանների Միության ժամանակացույցը և առաջարկում գաղափարներ, թե ինչպես օգնել երեյաններին սովորել ավետարանը՝ վարժություններ կատարելով: Այն նաև ուղեցույց է բազում միջոցների համար, որոնք նվիրված են Երեյանների Միությունում և տանը երեյանների ուսուցմանը:

Յուրաքանչյուր տարվա նշանակալի իրադարձությունը Երեյանների Միության ասների մասնակցությունն է երեյանների հաղորդության ժողովի հատուկ ծրագրին: Նրանք, թե խոսքերով, թե երգերով ներկայացնում են այն, ինչ սովորել են Երեյանների Միությունում: Որտեղ էլ որ այն տեղի է ունենում, իր հետ բերում է Տիրոջ Հոգու մեծ զեղումներ:



Նախագահ Բոսթրոմը կնոջ հետ:

գորությունը մեկ առ մեկ կյանքեր է փոխում»:

2. Աջակցել ծնողներին՝ ավետարանն իրենց երեխաներին տանը ուսուցանելու գործում

Ծնողներն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: «Եվ բոլոր քո զավակները պիտի ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը» (3 Նեփի 22.13): Խաղաղությունն ու երջանկությունը տանը կավելանա, երբ ծնողները ձգտեն ուսուցանել իրենց երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցիկ սկզբունքները՝ թե խոսքով, թե օրինակով:

Մենք հորդորում ենք ծնողներին օգտագործել սուրբ գրությունները, the Gospel Art book-ը, "Children's Songbook"-ը, և երաժշտական CD-ներ, երբ տանը ուսուցանում են իրենց երեխաներին: Երբ ծնողները և երեխաները միասին երգում են Երեխաների Միության երգերը, նրանք զգում են Տիրոջ Հոգին: Զորավոր «Եկ, հետևիր ինձ» առցանց տեսանյութը ցույց է տալիս, որ տարածաշրջանի յուրաքանչյուր նպատակը կապված է Երեխաների Միության այն երգի հետ, որն ուսուցանում է այդ սկզբունքը:



«Ինձ հետևիր» տեսանյութի նկարը


Ինձ հետևիր տեսանյութը հայերենով տես www.hqvose.am կայքում:

Պատմվածք. «Երկու երեխաների մայրը փորձում էր ավանդույթ ձևավորել՝ կանոնավոր ընտանեկան երեկոներ անցկացնել իր ընտանիքի հետ: Նրա ամուսինը թերահավատորեն էր մոտենում ամեն շաբաթ կազմակերպվող այդպիսի միջոցառման արդյունավետությանը և մի քանի շաբաթ շարունակ հետաձգում էր ընտանեկան երեկոյի նախաձեռնությունը: Վերջապես, երիտասարդ մայրը

որոշեց անսպասելիորեն սկսել, հույս ունենալով, որ ամուսինը կմիանար: Նա հրավիրեց ամբողջ ընտանիքին աղոթելու: Այնուհետև վերցրեց Մանկական Աստվածաշնչի պատմվածքները և սկսեց կարդալ մի պատմություն իր դստեր համար, մինչև նրա փոքրիկ տղան խաղում էր հատակին: Պատմվածքի կեսից հայրը որոշեց միանալ: Նա կարդալով ավարտեց պատմությունը: Այնուհետև ծնողները թույլ տվեցին, որ փոքրիկ աղջիկն ընտրի, թե ինչ խաղ է ուզում խաղալ ծնողների հետ միասին: Միջոցառման ավարտին ամուսինը խոստովանեց, որ զարմացած է, թե ինչ հեշտ է կազմակերպել ընտանեկան երեկոն»:

3. Մեծացնել հաղորդության ժողովների երկրպագության ոգին՝ օգնելով երեխաներին մթնոլորտում

Հաղորդության ժողովի ժամանակ կմեծանա ակնածանքը, եթե երեխաները դրսևորեն համապատասխան պահվածք: Ծնողները պետք է սովորեցնեն տարիքով մեծ երեխաներին հաղորդության ժողովին ակնածալից նստել և լսել: Փոքր երեխաների ծնողները կարող են Եկեղեցի բերել ավետարանի թեմաներով նյութեր, ինչպիսիք են the Gospel Art Book-ը, սուրբ գրություններ երեխաների համար և ավետարանի թեմաներով գունավորման գրքեր, որպեսզի հաղորդության ժողովի ընթացքում նրանք զբաղվեն:



The Gospel Art Book

Gospel Art Book-ը, ավետարանի թեմաներով գունավորման գրքերը և երեխաների համար սուրբ գրությունները կարելի է գնել www.store.lds.org կայքում: Gospel Art Book-ը կարելի է գնել www.lds.org կայքում և LDS Gospel Library-ում:

Տեղեկացում. գրությունները կարող են գնվել www.store.lds.org կայքից: The Gospel Art Book-ը մատչելի է www.lds.org-ում և LDS Gospel Library հավելվածում:

Ավելի կարևոր է, որ ծնողներն իրենց երեխաներին ակնածանքի մասին ուսուցանեն տանը: Ակնածալից վարքի մասին տանն ուսուցանելու հարմար պահեր են ընտանեկան աղոթքը, ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրությունը և ընտանեկան երեկոների դասերը: Եթե երեխաները տանը սովորեն, որ լինում են իրավիճակներ, երբ ակնածանք է պահանջվում, նրանց համար հեշտ կլինի ակնածալից լինել Եկեղեցում: Հաղորդության ժողովներին ակնածանքին նպաստելու լավ միջոց է երեխաներին Հաղորդության սուրբ իմաստի մասին ուսուցանելը:

Պատմվածք. «Նրջանի համաժողովի ժամանակ, երբ ես նստած էի բեմի վրա, նկատեցի առաջին շարքում նստած մի երիտասարդ տղայի: Նա կրկիկ հագնված էր, և նրա դեմքը փայլում էր Քրիստոսի լույսով: Նա նստած էր ակնածալից, երբեմն թերթելով իր գրկում պահած օրհներգերի գրքի էջերը: Հազվադեպ նրա դեմքին չարածճի մի հայացք էր հայտնվում, ու նա սկսում էր մի քիչ ավելի ակտիվ լինել: Նրա ավագ քույրը, որը նստած էր նրա կողքին, նրբորեն դնում էր իր ձեռքը նրա ուսերին: Ակնհայտ էր, որ սա հիշեցնում էր նրան ակնածանքի մասին, որ սովորեցրել էին նրան տանը»:

Երբ Փրկիչն Իր հարությունից հետո այցելեց Բաուսթիֆուլի երկիրը, նա հավաքեց երեխաներին Իր շուրջը, օրհնեց յուրաքանչյուրին և աղոթեց նրանց համար: Նա հորդորեց մարդկանց՝ «Նայեք ձեր փոքրիկներին»: Եկեք նայեք մեր փոքրիկներին և տեսնեք, թե որքան թանկ է նրանցից ամեն մեկը մեր Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու համար: Թող որ մենք խոնարհաբար քայլենք մեր Երկնային Հոր առջև աղոթքով և խնդրենք Նրան ոգեշնչել մեզ, որ իմանանք, թե ինչպես կարող ենք ուսուցանել և օրհնել յուրաքանչյուր երեխային: Երբ մենք ուրախակի հոգևոր փորձառություններ ենք դրսևորում ավետարանը տանը և Երեխաների Միությունում ուսումնասիրելու հարցում, մենք օգնում ենք երեխաներին ավելի լավ պատրաստվել՝ իրենց ողջ կյանքի ընթացքում հավատարիմ մնալ Փրկիչի մասին իրենց վկայություններին: ■

Գյումրի ճյուղի Երեխաների Միության նախագահություն

Գյումրի ճյուղի Երեխաների Միությունը



Գյումրի ճյուղի երեխաները երգում են Երեխաների Միության այս տարվա երգը, որն ասում է. «Ես զգում եմ Սուրբ Հոգին, երբ նա ուսուցանում է ինձ. նա ինձ սփռվում է և վկայում Քրիստոսի մասին, խոսում է մեղմ և խաղաղությամբ է հոգիս լցնում. և եթե սրտով եմ լսում, Փրկչի ձայնն է հնչում»: Այս երգը օգնում է երեխաներին ակնածալից լինել, որ կարողանան լսել Հոգու ձայնը: Նրանք խաղում են այնպիսի խաղեր, որոնք զորացնում են նրանց: Երեխաների ծնողները մեծ դեր ունեն այս գործում, առանց նրանց աջակցության չի կարողանա ունենալ այսպիսի հիանալի Երեխաների Միություն:

Մի քանի շաբաթ առաջ միջոցառում եղավ և բոլորս տեսանք երեխաների աճը Եկեղեցում: Ղեկավարների սերը ավելի շատ է օգնում երեխաներին, որ վստահեն Երկնային Հորը: Նրանք փորձում են նմանվել մեծերին: Դա լավ է նկատվում հաղորդության ժամանակ, երբ դահլիճում նստած մյուս անդամների լավ վարքը օգնում է երեխաներին ևս ակնածալից լինել: Նրանք բոլորը շատ լավն են. իրենց փոքրիկ լինելով շատ մեծ օրինակ են Եկեղեցու մյուս անդամների համար: Նրանց ելույթները,

վկայություններն այնքան լավն ու ամուր են, որ բոլորը զարմացած են: Նրանք սիրում են երգել, ունեն միախաչում ծառայելու ցանկություն:

Արդեն 3 տարի է Գյումրի ճյուղի Երեխաների Միության նախագահությունը ծառայում է միասին: Աստծո սերն ու օգնությունը միշտ ունեցել ենք, բայց այս վերջին ժամանակներում ավելի շատ ենք այն զգում: Երեխաների Միության նախագահությամբ միշտ խորհրդակցում ենք, թե ինչ կարիքներ ունեն երեխաները, աղոթում ու ծով ենք պահում նրանց համար: Մենք սիրում ու օգնում ենք երեխաներին ու փորձում ենք ճանաչել բոլորին: Մենք սովորեցնում ենք

երեխաներին, որ իմանան, թե ինչ մեծ նշանակություն ունեն իրենք Եկեղեցում: Նրանց օգնում ենք, որ կարողանան աղոթել, երգել, ու կիսվել իրենց փոքրիկ վկայություններով: Նրանք ապագա ղեկավարներ են, ճյուղերի, ծխերի ու ցցերի նախագահներ:

Երբեմն մեր Եկեղեցու նավահանգստում մենք չենք կարողանում տեսնել, որ այս փոքրիկ, կրկնվող գործերով՝ աղոթքով, սուրբ գրքերի ուսումնասիրությամբ և միջոցառումներով, իրականանում են մեծ բաներ: Բայց մենք վկայում ենք, որ հենց այս գործերն են, որ ունեն հավերժական նշանակություն: Մեծ ուրախություն է, երբ այդ փոքրիկ նավակները աճում են՝ դառնալով նավագնացության հզոր նավեր, լցված ավետարանի լույսով և պատրաստ՝ «մտնելու Աստծո ծառայության մեջ»: ■

ԶԳՏԵԼՈՎ ԼԻՆԵԼ ՀԻՍՈՒՍԻ ՆՄԱՆ

Զավակն եմ Աստծո

Արամ 2., 9 տարեկան, Աջափնյակ ճյուղ

Ես ամենաշատը սիրում եմ երգել: Իմ սիրած երգը «Մեր տան մեջ» երգն է: Այն ինձ դուր է գալիս, քանի որ լավ է, երբ տանը խաղաղություն կա, սեր կա, տանը չպիտի կռվեն, պիտի խաղաղություն լինի: Երեկոյան հաճախ մենք տանը ընտանիքով կարդում ենք սուրբ գրություններից պատմություններ, ինչպես նաև Եկեղեցում Երեխաների Միության դասերի ժամանակ: Երեխաների Միության դասերին նաև խաղեր ենք խաղում: Միրում եմ, երբ խաղում ենք և երբ ինչ-որ մեկը պարտվում է, պետք է որևէ պատմվածք պատմի սուրբ գրություններից կամ ինչ-որ հատված անգիր ասի: Երբեմն, երբ այնպիսի

թեմա է լինում, որ կարելի է նկարել այդ թեմայով, մենք յուրաքանչյուրս մեր ալբոմն ունենք և այնտեղ նկարում ենք դասի թեման, իսկ ով չի կարողանում նկարել, նա իր խոսքերով պատմում է սովորածը:

Ես սիրում եմ Ջոզեֆ Մմիթին, քանի որ նա քաջ էր՝ լսեց Աստծուն և կատարեց Աստծո



Արամ 2.

